
**ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ՎԱՐՔԱԳԻԾԸ
ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԵՂՅԱՆ Խ. Գ.

Տնտեսության մեջ գործող մեխանիզմների և տնտեսավարման ձևերի փոփոխման դեպքում պետական կարգավորման ավանդական մեթոդները, որպես կանոն, կորցնում են իրենց արդյունավետությունը: Այս առումով կարևոր է ոչ միայն համաշխարհային փորձը առկա իրավիճակին հարմարեցնելը, այլև անցումային տվյալ ժամանակաշրջանին բնորոշ բացասական երևույթների դեմ պայքարի սեփական մեթոդների և եղանակների մշակումը՝ հաշվի առնելով երկրի տնտեսության առանձնահատկությունները:

Գաղտնիք չէ, որ ամբողջ աշխարհում բազմաթիվ կազմակերպությունների գործունեությունն ապահով կերպով թաքցվում է «ստվերում»: Հարկ է նշել, որ ստվերային հոսքերի մասնակիցներ են ինչպես օրենքի պահանջների համաձայն ստեղծված, այնպես էլ ապօրինի գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտները: Նրանց կողմից արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների իրացումից ստացվող եկամուտը չի արտացոլվում համապատասխան հաշվետվություններում, հետևաբար չի դիտվում որպես հարկման օբյեկտ. այդ եկամտից հարկեր չեն գանձվում, ինչն էլ վնաս է հասցնում երկրի տնտեսությանը:

Նշված կազմակերպություններն իրենց գործունեության ընթացքում ժամանակ առ ժամանակ ընտրություն են կատարում օրինական և ստվերային գործելաոճերի միջև: Ստվերային վարքագծի դրսևորման ընտրությունը հիմնավորվում է դրա՝ տնտեսապես ձեռնտու լինելու հանգամանքով, ինչը, առաջին հերթին, վկայում է պետության կողմից համապատասխան օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտության մասին: Ընդ որում, տնտեսավարող սուբյեկտների հակաօրինական գործունեությունը բնույթով հետզհետե առավել դժվար հայտնաբերելի է դառնում՝ սկսած օրենքի ուղղակի խախտմամբ հարկեր չվճարելուց մինչև օրենսդրական երկիմաստություններից օգտվելով՝ հարկումից խուսափումը և, հետևաբար, առավել բարդանում է դրանց հայտնաբերումն ու բնորոշումը որպես օրենքի պահանջների խախտում: Հաճախակի են դառնում նաև կազմակերպված, խմբային բնույթ կրող հարկային իրավախախտումները: Այսպես, օրինակ, «ձևական» (կեղծ, անապրանք) գործարքների միջոցով ֆինանսական փաստաթղթերում արտացոլվում է իրականում տեղի չունեցող ապրանքների և ծառայությունների շարժ երկու տնտեսավարող սուբյեկտների միջև, այսինքն՝ գումար է «փոխանցվում» այնպիսի ապրանքների դիմաց, որոնք ամենևին էլ չեն մատակարարվել: Ի տարբերություն նշված մոտեցման՝ օրենքի շրջանակում գործունեություն ծավալելու դեպքում կազմակերպությունը հնարավորություն է ունենում իր իրավունքների պաշտպանության համար դիմելու դատական և գործադիր

մարմիններին, բացի այդ, գերծ մնալ հարկային և վերահսկիչ այլ մարմինների կողմից իրականացվող լրացուցիչ ստուգումներից:

Հարկատու տնտեսավարող սուբյեկտներին պետության վերահսկողությունից «դուրս մղող» հիմնական պատճառներից են քաղաքական և տնտեսական անկայուն իրավիճակը, գործող օրենսդրության անկատարությունը, գործարարության խթանման համար պետության ոչ ճիշտ քաղաքականությունը, դատական համակարգի և վերջինիս որոշումներն իրականացնող մարմինների անարդյունավետ աշխատանքը և այլն: Այլ կերպ ասած՝ տնտեսական վարքագծի օրինականության վերաբերյալ որոշումների կայացման վրա իրենց էական ազդեցությունն են թողնում ինչպես հարկադրույքների, տույժերի և տուգանքների մեծությունները, այնպես էլ պետական վերահսկող մարմինների օրինապահ աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը, համապատասխան ստորաբաժանումներում «հովանավոր» ունենալու ծախսերի մեծությունը, զանազան ռիսկերից ապահովագրվելու ծախսերը և կազմակերպության շահույթի մեծության վրա ներգործող մի շարք այլ գործոններ:

Պետությունը նույնպես իր հերթին գնահատում է սեփական հնարավորություններն ու ռեսուրսները ապօրինի գործունեության դեմ պայքարը խստացնելու համար: Նման պարագայում առավել արդյունավետ է ոչ թե հարկերի դրույքաչափերի բարձրացումը, այլ «հայտնաբերվելու» ռիսկի ավելացումը, քանի որ լրացուցիչ հարկերի գանձումը կարող է բացասաբար ազդել մի շարք կազմակերպությունների ֆինանսական դրության վրա՝ դրանով իսկ կրճատելով հարկային մուտքերը հետագա ժամանակաշրջանում: Տնտեսավարող սուբյեկտն ինքնուրույն պետք է որոշի՝ վճարել իր հարկերը ներկա իրավիճակում, թե՞ լրացուցիչ ծախսեր կատարել ապագայում: Ուստի նման հարցերում պետական մարմինների կողմից ուժի գործադրումը կարող է նաև ցանկալի արդյունք չապահովել:

Տնտեսության ստվերային հատվածում բիզնեսի ընդգրկման մակարդակը կարող է դիտվել որպես իրականացվող հարկային քաղաքականության, կիրառվող կարգավորման մեթոդների և, ընդհանուր առմամբ, իրավական համակարգի և տնտեսական քաղաքականության ցուցանիշների արդյունավետության ստուգման թեստ: Անկախ օրինական դաշտից ֆինանսական միջոցների հոսքի ամենատարբեր պատճառներից՝ երկրում սովորաբար իրավիճակն այնպիսին է, որ տնտեսավարող սուբյեկտներին ձեռնտու է լինում իրենց միջոցների ներգրավումը ստվերային շրջանառության մեջ: Սա նշանակում է, որ այդ միջոցների հետ վերադարձը նույնպես պետք է պայմանավորված լինի տնտեսական դրդապատճառներով. առավելագույն շահութաբերության մակարդակ պետք է ապահովի տնտեսության օրինական դաշտը, իսկ ստվերային դաշտում որևէ գործարք իրականացնելը պետք է խստորեն հետապնդվի օրենքով:

Փորձենք վերը նշված ընտրության գործընթացը մաթեմատիկորեն նկարագրել՝ դիտարկելով հետևյալ ֆունկցիան.

$$U(I_r, I_d, p, k) = [I_r - I_d t - (I_r - I_d)k](1 - p) + [I_r - I_d t - (I_r - I_d) \cdot k - (I_r - I_d)t - (I_r - I_d)tf]p \quad (1),$$

որտեղ U -ն տնտեսավարող սուբյեկտի (ֆիզիկական կամ իրավաբանական անձի) կողմից հարկումից խուսափելու «օգտակարությունն» է,

I_r -ն՝ իրական համախառն եկամուտը (իրացման շրջանառությունը),

I_d -ն՝ հայտարարագրված համախառն եկամուտը,

p -ն՝ հարկումից խուսափելու փաստը բացահայտվելու հավանականությունը,

t -ն՝ հարկի դրույքաչափի մասնաբաժինը համախառն եկամտի մեծության մեջ,

k -ն՝ թաքցված համախառն եկամտի այն մասը, որը տնտեսավարող սուբյեկտը վճարում է տվյալ «ծառայությունը» մատուցող միջնորդ անձանց (օրինակ՝ ստուգող մարմիններին տրվող կաշառքի մասնաբաժինը՝ թաքցված համախառն եկամտի մեջ),

f -ն՝ հարկային մարմինների կողմից խախտումը բացահայտվելու դեպքում հաշվարկված տույժի մասնաբաժինն է՝ թաքցված հարկի գումարի մեծության մեջ:

(1) առնչության տնտեսագիտական իմաստն այն է, որ հարկատուն համախառն եկամտի (իրացման շրջանառության) հայտարարագրման վերաբերյալ որոշում ընդունելիս (այլ կերպ ասած՝ հարկերի որ մասը վճարել, որը՝ թաքցնել) առաջնորդվում է իր պոտենցիալ եկամտի մեծությամբ: Այդ եկամուտն առաջանում է այն գումարից, որը հարկատուն կստանա ($1 - p$) հավանականությամբ, եթե խախտումը չհայտնաբերվի, և p հավանականությամբ՝ խախտումը հայտնաբերվելու դեպքում, երբ վերջինս ստիպված կլինի վճարել թաքցված հարկի, ինչպես նաև դրա նկատմամբ հաշվարկված տույժի գումարը: Առաջնորդվելով սեփական փորձով և մյուս տնտեսավարող սուբյեկտների վարքագծով, հաշվի առնելով իր կատարած խախտման բացահայտվելու հնարավորությունը և դրա հետ կապված հավելյալ ծախսերը՝ հարկատուն գնահատում է այն լրացուցիչ եկամուտը, որը կառաջանա հարկումից խուսափելու դեպքում:

U օգտակարության ածանցյալը, ըստ հայտարարագրված համախառն եկամտի, հավասարեցնելով զրոյի՝ կստանանք հետևյալ հավասարումը.

$$t = \frac{k}{1 - p(1 + f)} \quad (2) \quad \text{կամ} \quad p = \frac{t - k}{t(1 + f)} \quad (3):$$

(2) և (3) հավասարումները թույլ են տալիս որոշել ֆունկցիայի այն արժեքները, որոնց դեպքում, հարկումից խուսափելով, հարկատուն լրացուցիչ եկամուտ չի ստանա («անտարբերության» վիճակ):

Այն դեպքում, երբ $t > \frac{k}{1 - p(1 + f)}$ (4), և $(1 + f) < 1/p$, լրացուցիչ եկամտի

մեծությունը դրական է, հետևաբար U օգտակարությունը կաճի: Հակառակ դեպքում՝

$t < \frac{k}{1 - p(1 + f)}$, լրացուցիչ եկամտի

մեծությունը բացասական է, այսինքն՝ U -ն կնվազի, հետևաբար, հարկատուի տեսանկյունից խելամիտ չէ խախտում կատարելը:

(1) առնչության մեջ կիրառվող գործակիցները փորձենք փոխարինել Հայաստանի Հանրապետությունում գործող հարկային օրենսդրությամբ նախատեսված դրույքաչափերի թվային արժեքներով: Դիցուք՝ ընդհանուր հարկման կարգով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող հարկատուն թաքցրել է ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտ հանդիսացող համախառն եկամտի իրական մեծությունը: Այդ դեպքում (1) առնչությունը կընդունի հետևյալ տեսքը¹.

$$U(I_r, I_d, p, k) = [I_r - 0.2I_d - (I_r - I_d) \cdot k](1 - p) + [I_r - 0.2I_d - (I_r - I_d) \cdot k - 0.2(I_r - I_d) - 0.5 \cdot 0.2(I_r - I_d) - 0.1 \cdot 0.2(I_r - I_d)]p \quad (5):$$

Քանի որ խախտումը կարող է իրականացվել նաև առանց որևէ միջնորդ անձի օգնության, ուստի k գործակիցը սովորաբար բավական փոքր է: Ընդունելով $k = 0,1$ և օգտվելով (3) հավասարումից՝ կստանանք, որ $p \approx 0,31$ դեպքում հարկատուն «անտարբերության» վիճակում կլինի, իսկ $p > 0,31$ դեպքում՝ հարկումից խուսափելը նրա համար ընդհանրապես ձեռնտու չի լինի: Սակայն հարկատուների կողմից հարկային օրենսդրության խախտումը բացահայտելու հավանականությունը գործնականում շատ բարձր է (մոտ 1-ին): «Հարկերի մասին» ՀՀ օրենքի հոդված 30-ի համաձայն՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո: Մինչդեռ այդ ժամանակահատվածում յուրաքանչյուր հարկատու բազմիցս տուգանվում է՝ ենթարկվելով մեկ կամ մի քանի տարբեր բնույթի ստուգումների, օրինակ՝ բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, ձեռնարկատիրական գործունեության առարկաների (առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների) գրանցման ճշտության ստուգում, ակցիզային դրոշմանիշների կիրառման ճշտության ստուգում, հսկիչ-դրամարկային մեքենաների կիրառման ճշտության ստուգում և այլն:

Այդուհանդերձ, նշվածը չի կարող հակադրվել (3) հավասարմանը, քանի որ ստուգումների քանակը և կիրառվող տուժանքները դեռևս չեն վկայում հարկային մարմնի արդյունավետ աշխատանքի մասին, և, բացի այդ, շատ դեպքերում տույժեր են կիրառվում խախտումների ընդամենը չնչին մասի նկատմամբ, ինչը որևէ կերպ չի խթանում տվյալ հարկատուի

¹ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 9, հոդված 43, «Հարկերի մասին» ՀՀ օրենք, հոդված 25 (տե՛ս Հարկեր, տուրքեր և վճարումներ, Ե., 2008): (5) առնչության մեջ կարելի է հաշվի առնել նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվող տույժը՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով (նույն տեղում):

գործունեության՝ օրենքի դաշտ տեղափոխումը (տնտեսավարման լեգալացում):

Ինչպես նշվեց, հարկումից խուսափելու փաստացի ծավալը չհայտնաբերելու հիմնական պատճառներից են, նախ և առաջ, հարկային օրենսդրության բարդությունը՝ պահանջների ձևակերպման ոչ մատչելի լինելը, այնուհետև, կոռուպցիան՝ իշխանական օղակներում պաշտոնական դիրքի չարաշահման դեպքերի հաճախակիությունը, միջանձային կապերի էական դերը մի շարք խնդիրների լուծման ընթացքում, կաշառառության բարձր տեսակարար կշիռը և այլն: Օրենսդրության բարդությամբ և թերություններով են հիմնավորվում հարկային պարտավորությունների հաշվարկման ժամանակ պատահական սխալներ թույլ տալու բավական մեծ հավանականությունը, ստուգող մարմինների կողմից առանձին հարկատուներին տարբերակված մոտեցում կիրառելու հնարավորությունը, վերադաս մարմինների՝ առավել ցածր օղակներին վերահսկելու մեխանիզմների անարդյունավետությունը և, վերջապես, կոռուպցիայի նկատմամբ «պահանջարկի» աճը: Այս ամենի հետևանքով նվազում է կիրառվող հարկային վարչարարության արդյունավետությունը, քանի որ նման պայմաններում հարկատուն հնարավորություն է ունենում համաձայնության գալու ստուգող մարմնի հետ՝ ստուգման ընթացքում որպես տույժ արձանագրվող որոշակի գումարի շրջանակում: Այլ կերպ ասած՝ պատասխանատվության միջոցների անփոփոխության պարագայում կարևոր է օրենքի խախտման փաստը բացահայտելու մեծ հավանականության ապահովումը: Դրան կարելի է հասնել ստուգումների քանակի ավելացման և ստուգող մարմիններում կադրային ռեզերվի ավելացման շնորհիվ: Սակայն վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ ստուգողների թվաքանակի ավելացումն իր հետ կարող է բերել նաև ոչ այնքան դրական (բացահայտված խախտումների թվի աճ), որքան բացասական հետևանքներ, այսինքն՝ կոռուպցիայի մասշտաբների ընդլայնում:

Հարկումից խուսափելու դեմ, որպես պայքարի մեթոդ, տույժերի դրույքաչափերի բարձրացումը, ի տարբերություն նախորդ տարբերակի, ավելի քիչ ծախսեր է պահանջում: Այս դեպքում, քանի որ հարկումից խուսափելը տնտեսավարող սուբյեկտի տեսանկյունից ձեռնտու է այն պարագայում, երբ տեղի ունի (4) պայմանը, հետևաբար, տուգանքների ավելացումը հարկատուին կստիպի ավելացնել նաև k -ի արժեքը, որպեսզի չխախտվի այդ պայմանը: Միաժամանակ, փոփոխվում է նաև կոռուպցիայի «առաջարկը», քանի որ ավելանում են միջնորդ անձանց ծախսերը՝ կապված զանազան ռիսկերից ապահովագրվելու հետ (օրինակ՝ օրենսդրության խախտումների բացահայտված թվաքանակի նվազումը կարող է վերահսկիչ մարմնի կողմից ստուգման ենթարկվելու պատճառ դառնալ): Չնայած դրան՝ այդ հավելյալ ծախսերի մեծ մասը կրում են հարկատուները, քանի որ միջնորդ անձանց կողմից բարձրացվում են «սակագները»: Նրանց է պատկանում նման «ծառայությունների» մատուցման մենաշնորհը: Այսինքն՝ տույժերի դրույքաչափերի բարձրացումը նույնպես չի ապահովում ցանկալի արդյունք:

Օգտվելով (3) հավասարումից և (4) առնչության մեջ օգտագործվող թվային արժեքներից՝ կստանանք հետևյալ բանաձևը.

$$p = \frac{0,2 - k}{0,32}; \quad k \in [0; 0.2] \quad (6):$$

Փոփոխելով k գործակցի մեծությունը՝ կարելի է հաշվել հարկումից խուսափելու փաստը բացահայտվելու հավանականության համապատասխան արժեքները:

k	0,00	0,01	0,05	0,10	0,15	0,20
p	0,625	0,593	0,468	0,312	0,156	0,000

Աղյուսակի թվերը վկայում են, որ k գործակցի աճը նվազեցնում է հարկային վարչարարության արդյունավետությունը:

Այսպիսով, հարկումից խուսափելու դեմ արդյունավետ պայքարելու համար պետք է խստացնել միջնորդ անձանց (օրինակ՝ ստուգող հարկային տեսուչների) նկատմամբ կիրառվող պատժամիջոցները, որպեսզի նրանց «բիզնեսը» լինի առավել ռիսկային, ինչը նրանց կստիպի կամ դադարեցնել այդ ամենը, կամ չափազանց մեծ «միջնորդավճարներ» սահմանել: Ուստի տնտեսավարող սուբյեկտների մեծ մասը կհրաժարվի նման «ծառայություններից», իսկ այդ դեպքում, բնականաբար, բացահայտվելու հավանականությունն անհամեմատ մեծ կլինի:

ОПТИМАЛЬНОЕ ПОВЕДЕНИЕ ХОЗЯЙСТВУЮЩИХ СУБЪЕКТОВ И ПРОБЛЕМЫ НАЛОГОВОГО АДМИНИСТРИРОВАНИЯ

ЕГЯН Х. Г.

Резюме

Хозяйствующие субъекты время от времени делают выбор между законной и теневой деятельностью. Выбор теневого поведения обусловлен экономической выгодой, что в первую очередь свидетельствует о необходимости соответствующих законодательных преобразований со стороны государства.

Для эффективной борьбы с уклоняющимися от налогов хозяйствующими субъектами необходимо ужесточить меры наказания в отношении “посредников” (к примеру, сотрудников налоговой инспекции), оказывающих свои “услуги” налогоплательщикам.